

Դեռ վաղ ժամանակներից գոյություն է ունեցել հոգեբանական ազդեցություն հակառակորդի վրա գործոնը:

Չինգիզ խանը և Հաննիբալը մինչև իրենց ճակատամարտի սկսելը լուր էին տարածում հակառակորդի թիկունքում, թե ինչքան անհաղթ, ահռելի և հզոր զինատեսակներ ունեն: Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո Արևմտյան երկրներում գրվեցին տասնյակ աշխատություններ հոգեբանական պատերազմի վերաբերյալ, տարբեր համալսարաններում բացվեցին ֆակուլտետներ, որտեղ ուսումնասիրվում էր հոգեբանական պատերազմը: Այդ բնագավառի պրոֆեսորներից մեկը գրեց հետևյալը .«ժամանակակից պատերազմում հիմնական նպատակն է ոչ թե ոչնչացնել հակառակորդի զորքերը, այլ ներսից քայքայել , ըմբոստացնել ժողովրդին, որպեսզի նրանք պահանջեն իրենց իշխանությանը՝ գնալ խաղաղության»: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ գերմանացիների կողմից ստեղծվել են ջոկատներ, ովքեր քարոզչություն էին տանում իրենց ժողովրդի և բանակի մեջ, պատերազմի գոտում՝ զինվորների հետ, թշնամու տարածքում: Գերմանացիներն իրենց ամենամեծ քարոզարշավին հասան 1940 թվականին, երբ մի քանի ամիս առաջ, մինչ Ֆրանսիա մտնելը, կեղծ ռադիոհաղորդումների միջոցով քննադատում էին Ֆրանսիայի իշխանությանը, որն էլ ստեղծեց վախի մթնոլորտ և հիմնական պատճառ դարձավ, որ Գերմանիան հեշտությամբ գրավեց Ֆրանսիան:

Ֆրանսիացիները ստեղծեցին զինվորական քարոզչական ծառայություն, որը ազդում էր հասարակության վրա թռուցիկների միջոցով: 21-րդ դարում՝ պատերազմական դրության ժամանակ, պետության կողմից պետք է վերահսկվեն լրատվամիջոցները: Կարևոր դեր է խաղում հասարակության մեջ հեղինակություն վայելող մարդկանցից տարածվող լուրը: Ամենամեծ տարածում ունեցող հոգեբանական պատերազմը բաժանվում է 3 խմբի.

1. Հոգեբանական ճնշում- դա երկար խոսքն է սուտ թեզիսների մասին, որը անօգուտ է և թափանցում է մարդու գիտակցության մեջ՝ օգտագործելով մեր բնազդի թույլ կողմը:
2. Չնկատվող ներթափանցում մարդու գիտակցության մեջ, խոսել լավ ու հեշտ կյանքի մասին. օրինակ՝ սերիալները:
3. Թաքնված խանգարումներ, որոնք հակասում են լոգիկայի օրենքներին:

**1+1 թերթի խմբագրություն**